ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մ., ԳԵՎՈՐԳՅԱՆ Է., ՄԵԼՔՈՆՅԱՆ Է., XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման խորհրդահայ պատմագրությունը (1921-1991 թթ.), *Ե., «Զանգակ-97» հրատ., 2010, 303 էջ:*



Հայ ժողովրդի պատմության գիտական ուսումնասիրության ասպարեզում թե՛ հայրենական և թե՛ արտասահմանյան պատմագիտական մտքի վերլուծությունը հայրենական պատմագիտության աքիլլեսյան գարշապարներից է: Ցավոք, այս տխուր փաստը բնորոշ է նաև առ այսօր, ըստ էության, ստվերում գտնվող՝ Հայոց ցեղասպանության պատմության հարուստ պատմագրությանը: Այս ասպարեզում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ Մհեր Կարապետյանն ունի, անտարակույս, անուրանալի ներդրում, քանզի առաջինն է ձեռնամուխ եղել հայրենական պատմագիտական մտքի նվաճումների քննական վերլուծությանը[1]:

Է. Գևորգյանի և Է. Մելքոնյանի հեղինակակցությամբ գրված սույն մենագրությամբ Մ. Կարապետյանն ամբողջացնում է 1921-1991 թթ. խորհրդահայ պատմաբանների՝ XIX դ. հայկական ազգային-ազատագրական շարժման պատմությանն առնչվող ուսումնասիրությունների քննական վերլուծությանը նվիրված իր նախորդ աշխատանքները: Ընթերցողի դատին հանձնված այս գիրքն առաջին ամբողջական փորձն է՝ ի մի բերելու խորհրդահայ պատմագրության ձեռքբերումները և ելևէջները ոչ միայն ազգային-ազատագրական շարժումների, այլև XIX դ. արևելահայ և արևմտահայ հասարակական հոսանքների, ազգային կուսակցությունների, Հայկական հարցի, եվրոպական տերությունների քաղաքականության հիմնախնդիրների ուսումնասիրության ասպարեզում: Այլ կերպ ասած, մեր կարծիքով, հեղինակներն ազգային-ազատագրական շարժումների պատմությանն առնչվող պատմագիտական հիմնախնդիրները քննարկում են հայրենական պատմագրության նվաճումների բավական լայն հետնախորքի վրա, երբեմն նույնիսկ դուրս գալով աշխատության վերնագրում ամրագրված թեմայի շրջանակից:

Մենագրությունը բաղկացած է երկու բաժնից՝ «Ազատագրական շարժումը 1920-1960-ական թվականների պատմագրության գնահատմամբ» և «Ազատագրական շարժման լուսաբանումը 1970-1980-ական թվականների խորհրդահայ պատմագրության մեջ» խորագրերով: Երեք գլուխներից բաղկացած առաջին բաժնում հեղինակները որդեգրել են նյութի շարադրման պրոբլեմային սկզբունքը, ինչը, մեր կարծիքով, նախընտրելի է:

---

[1] *Տե՛ս, օրինակ,* **Կարապետյան Մ.,** *Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Ե., 1999,* **նույնի՝** *Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Ե., 2005,* **նույնի՝** *XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման հիմնահարցերը մինչխորհրդային հայ պատմագրության մեջ, ուսումնական ձեռնարկ, Ե., 2008:*

Այստեղ մանրակրկիտ քննարկվում են հայրենական պատմաբանների ուսումնասիրությունները 1920-ական թթ. ի վեր (Լեո, Ա. Կարինյան, Բ. Բորյան), բացահայտվում ազատագրական շարժումների պատմությանը նրանց տված գնահատականների սահմանափակությունները՝ մասնավորապես կապված 1862 թ. Զեյթունի ապստամբության ազգային ազատագրական բնույթը չըմբռնելու, այն օտար ուժերի հրահրմամբ պայմանավորելու հետ:

Հիրավի, խորհրդային իշխանության տարիներին սույն թեմայի ուսումնասիրության համար, ինչպես այդ մասին նշում են նաև հեղինակները, քաղաքական մթնոլորտը բարենպաստ չի եղել: Ազատագրական շարժումների պատմության գիտական ուսումնասիրության ասպարեզում առաջնեկն ակադեմիկոս Մ. Ներսիսյանն էր, որի 1955 թ. լույս տեսած հիմնարար աշխատությունը հեղինակները ենթարկել են բազմակողմանի քննության և արժևորել հեղինակի դերն իրադարձությունների հավաստի գնահատականներ առաջադրելու հարցում: Մ. Ներսիսյանը, ըստ նրանց իրատեսական հետևության, միանգամայն նոր տեսանկյունից է գնահատել 1862 թ. ապստամբությունը և այն դիտել իբրև «հայ ազատագրական շարժման նոր՝ ազգային-ազատագրական փուլի սկիզբը»(էջ 10): Անկողմնակալ դիրքերից է մեկնաբանված նաև խորհրդահայ այլ պատմաբանների (Վ. Մելիքսեթյան, Հ. Ղազարյան, Հ. Պողոսյան և այլք) ներդրումը հիմնախնդրի ուսումնասիրության գործում: Ընդհանուր առմամբ, հեղինակները հանգում են միանգամայն ընդունելի և խիստ արդիական հետևության, այն է՝ խորհրդային պատմաբանների աշխատությունները հակահարված են տալիս հայ ժողովրդի պատմության ժամանակակից, մասնավորապես թուրք կեղծարարներին, քանզի վերջիններս ջանում են 1862 թ. ապստամբությունը ներկայացնել իբրև 1890-ական թվականների կոտորածների «հիմնապատճառներից մեկը և այդպիսով արդարացնել թուրք կառավարողների ջարդարարական քաղաքականությունը»(էջ 19):

Մենագրության մեջ մեծ տեղ է հատկացված խորհրդահայ պատմաբաններ Աշ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, Վ. Պարսամյանի, Հ. Ղազարյանի ավանդի գնահատմանը 1850-1860-ական թթ. հասարակական հոսանքների ուսումնասիրության բնագավառում, շեշտը դրված է հայ ազգային գործիչների՝ ազատագրական շարժումների հանդեպ ունեցած վերաբերմունքի վերլուծության վրա: Մեկնաբանված են նաև պատմաբանների միջև առկա տարակարծությունները, առավելապես հասարակական հոսանքների դասակարգման հարցում: Թեև հեղինակները մանրամասնում են, որ չեն հետապնդել այս հարցի պատմության շուրջ ստեղծված գրականության, մասնավորապես գրականագետների աշխատությունների հա-մապարփակ ընդգրկման նպատակ, այդուհանդերձ, արդարացված չենք համարում Ա. Կարինյանի՝ Մ. Նալբանդյանին նվիրած ուսումնասիրության[2] շրջանցումը, որը մեր իրականության մեջ եղել է առաջին լուրջ աշխատանքը հայ մեծ հեղափոխական-դեմոկրատի մասին, առավել ևս, եթե նկատի ունենանք, որ նույն հեղինակի տեսակետները նրանք քննարկել են միանգամայն տարբեր հիմնախնդիրների (1862 թ. Զեյթունի ապրստամբության, ազատագրական շարժման գաղափարախոսության) առնչությամբ:

Հետևելով հիմնահարցերի ներկայացման և վերլուծության պրոբլեմային սկզբունքին՝ հեղինակներն ամենայն մանրամասնությամբ քննարկում

---

[2] **Կարինյան Ա.,** *Միքայել Նալբանդյանը և XIX դ. 60-ական թվականների ռուս առաջավոր գործիչները, Ե., 1979:*

են իրենց խորհրդահայ նախորդների մոտեցումներն ազատագրական խմբակների և հայկական ազգային կուսակցությունների գործունեության, ազատագրական պայքարի բնույթի, գաղափարախոսության և հարակից խնդիրների շուրջ: Մանրազնին ուսումնասիրված է նաև խորհրդահայ պատմաբաններից ոմանց (Լեո, Աշ. Հովհաննիսյան, Հ. Վարդանյան) ավանդն ազգային կուսակցությունների պատմության կնճռոտ հիմնահարցերի ուսումնասիրության բնագավառում, մասնավորապես ազգային-ազատագրական շարժման հանդեպ նրանց որդեգրած դիրքորոշման կտրվածքով:

Գիտական անաչառ դիրքերից արժևորվում է նաև Մ. Ներսիսյանի, Ռ. Հովհաննիսյանի, Կ. Թառոյանի և այլոց աշխատությունների նշանակությունն ազատագրական շարժման բնույթի վերհանման գործում: Հեղինակները շեշտում են, որ հակադրվելով իր նախորդներին՝ Մ. Ներսիսյանն ազատագրական շարժումը բնորոշել է իբրև հակաֆեոդալական և ժողովրդավարական, որը թուրքական ֆեոդալական-միապետական կարգերի դեմ ուղղված բուրժուական հեղափոխության դրսևորումներից էր (էջ 98): Հարկ է նշել, որ Հ. Ղազարյանի կողմից հայ բուրժուազիայի տարբեր շերտերի՝ ազատագրական շարժման հանդեպ ունեցած դիրքորոշումների տարբերության մեկնաբանությունը նրանք իրավամբ համարում են խիստ կարևոր՝ տվյալ հարցում հստակություն սահմանելու համար (էջ 106-107): Նշենք, որ Արևմտյան Եվրոպայի միջնադարյան և նոր դարի պատմությանը նվիրված աշխատություններում՝ եվրոպական տարբեր երկրներում բուրժուազիայի, ինչպես նաև այլ դասակարգերի և դասերի (ազնվականություն, հոգևորականություն) տարբեր շերտերի կողմնորոշումների ներհակության բացահայտումը (անկախ այն բանից, թե ինչ ասպարեզներում) և մանրակրկիտ ուսումնասիրությունը վերջին տասնամյակներում գտնվում է զանազան քաղաքական և գիտական կողմնորոշումներ ունեցող արևմտյան մեծաթիվ պատմաբանների ուշադրության կենտրոնում: Ուստի, առավել ևս ողջունելի է հեղինակների ուշադրության կենտրոնացումը՝ Հ. Ղազարյանի դրսևորած նման մոտեցման վրա:

Ազատագրական շարժման գաղափարախոսության գնահատման շուրջ պատմաբաններն առաջադրել են իրարամերժ գնահատականներ: Այս խրրթին խնդիրը ևս մանրակրկիտ ուսումնասիրված է հեղինակների կողմից: Քննադատական արդարացի խոսքեր են հնչում Լեոյի որոշ անընդունելի տեսակետների առնչությամբ, մասնավորապես Արևմտյան Հայաստանում Հայկական հարցի քաղաքական բնույթի ժխտման շուրջ, որին, իբր, քաղաքական բնույթ է հաղորդել սոսկ գաղութահայ մտավորականությունը: Առիթից օգտվելով՝ նշենք, որ հեղինակներն օգտագործում են նաև «Թուրքահայաստան» արտահայտությունը, ինչը, մեր կարծիքով, աննպատակահարմար է (էջ 113): Մանրամասնվում է Մ. Ներսիսյանի դերն այս տեսակետի վերանայման հարցում, որը շարժման գաղափարախոսության մեջ տարբերակել է երկու դիրքորոշում՝ ժողովրդական խավերի և բուրժուազիայի: Մեկնաբանված են նաև Աշ. Հովհաննիսյանի հայացքների բարեշրջումն այս կապակցությամբ, ինչպես նաև Ռ. Հովհաննիսյանի և Հ. Ղազարյանի տեսակետները:

Գիտական կարևորության առումով նվազ հետաքրքրական չէ մենագրության՝ հինգ գլխից բաղկացած երկրորդ բաժինը, որտեղ նյութը շարադրված է ըստ խորհրդահայ պատմաբանների կողմից ուսումնասիրված առանձին մեծ թեմաների քննարկման, ինչպիսիք են արևմտահայության սոցիալ-քաղաքական կացության, հասարակական մտքի, ազատագրական խմբերի և ազգային կուսակցությունների գործունեության, Հայկա-

կան հարցի, համիդյան կոտորածների և ինքնապաշտպանական մարտերի, պանթուրքիզմի պատմությունը: Առանց թափանցելու տարբեր մանրամասների մեջ՝ նկատենք, որ խոսքը վերաբերում է մանրակրկիտ, բծախնդիր ուսումնասիրության, որի հեղինակների ուշադրությունից չի վրիպել իրենց նախորդների և ոչ մի կարևոր աշխատություն:

Նրանք քննարկում են նշված թեմաների ուսումնասիրության ասպարեզում խոր հետք թողած հայրենական պատմաբաններ Ծ. Աղայանի, Հ. Սիմոնյանի, Ա. Համբարյանի, Մ. Մխիթարյանի և այլոց ուսումնասիրությունները, գնահատում նրանց մոտեցումների առավելությունները: Նշանակալից տեղ է հատկացված Հայկական հարցի հետազոտության բընագավառում մեր իրականության մեջ առաջին գիտական քայլերն իրականացրած պատմաբաններին, հավուր պատշաճի արժևորվում է, մասնավորապես Ջ. Կիրակոսյանի ներդրումը թե՛ Հայկական հարցի շուրջ փաստաթղթերի հրատարակման և թե՛ արևմտահայության պատմության բազմակողմանի ուսումնասիրության գործում (էջ 150-179), ներկայացվում են նաև Հայկական հարցում բրիտանական քաղաքականության վերլուծությանը նվիրված՝ Ա. Կիրակոսյանի աշխատության հիմնական դրույթերը (էջ 179-200):

Բուն ազատագրական շարժումների և 1890-ական թթ. լայնածավալ կոտորածների պատմությանը նվիրված մենագրությունների թվում (Ա. Համբարյանի, Հ. Պողոսյանի, Կ. Թառոյանի) Մ. Կարապետյանը և իր գործընկերները մեծ տեղ են հատկացնում նաև «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակությանը, որի 5-րդ և 6-րդ հատորների հեղինակների թվում են ի շարս այլոց Աշ. Հովհաննիսյանը, Հ. Ղազարյանը, Ռ. Հովհաննիսյանը: Հեղինակներն ուշադրությունը կենտրոնացնում են հատկապես վերջինի՝ ազգային-ազատագրական շարժումների պատմությանը նվիրած հոդվածների վրա, գնահատում նրա՝ իբրև այս ասպարեզում առաջնեկներից մեկի մեծ ներդրումը, միաժամանակ բացահայտում նրա մոտեցումների առանձին կողմերը, որոնք իրավացիորեն պայմանավորվում են գլխավորապես խորհրդային ժամանակներին բնորոշ պայմաններում առկա գաղափարական կապանքներով: Խոսքն առաջին հերթին վերաբերում է հայկական ազգային կուսակցություններին՝ իշխող գաղափարախոսության կողմից տրված կողմնակալ գնահատականներին, որոնք չէին կարող անհետևանք անցնել: Ռ. Հովհաննիսյանին բնորոշելով իբրև «ըմբոստ ոգու տեր» անձնավորության՝ հեղինակները ցավով նշում են, որ նա հնարավորությունից զուրկ է եղել ոչ միայն մանրամասնելու, այլև նույնիսկ փաստելու 1890-ական թթ. սկզբին իրենց գործունեությունը ծավալած մեր ազգային գործիչների քաղաքական պատկանելությունը (էջ 223):

Մենագրության մեջ պանթուրքիզմի էության բացահայտմանն անդրադարձած հեղինակների (Մ. Ներսիսյան, Ա. Համբարյան, Ջ. Կիրակոսյան, Հ. Սիմոնյան) տեսակետների վերլուծության հիման վրա հեղինակները հանգում են ընդունելի և խիստ այժմեական հետևության, այն է՝ «անկախ քաղաքական զարգացումներից», թուրքական ռազմատենչ գաղափարախոսության էության բացահայտումը հարկ է, որ մշտապես մնա հայրենական պատմագիտության ուշադրության կենտրոնում (էջ 297):

Ընդհանուր առմամբ, Մ. Կարապետյանը, Է. Գևորգյանը և Է. Մելքոնյանն իրավամբ բարձր են գնահատում իրենց խորհրդային նախորդների ծանրակշիռ ներդրումը հայ ժողովրդի նոր դարի պատմության այլևայլ հիմնահարցերի գիտական ուսումնասիրության ասպարեզում (էջ 65, 124, 149, 208 և այլն):

Այդուհանդերձ, մեր կարծիքով, գուցե և իմաստ ուներ համառոտել աչքի զարնող՝ դիվանագիտական հարաբերությունների, արևմտահայության կոտորածների պատմությանն առնչվող տարբեր մանրամասների նկարագրությունները, ինչն ուղղակիորեն չի առնչվում ազատագրական շարժումների բուն պատմության ուսումնասիրության հիմնախնդրին:

Հեղինակները սույն աշխատությունը նվիրել են մեր պատմագիտական իրականության մեջ ազատագրական շարժումների և Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրությանն առաջինը ձեռնամուխ եղած և այդ տատասկոտ ճանապարհին բազում բարդություններ հաղթահարած ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի հիշատակին՝ հարգանքի խորին տուրք մատուցելով նրան :

Պատմաբանների և ընթերցողի դատին է հանձնվել հետաքրքիր, հագեցված ուսումնասիրություն, որի հեղինակներն իրականացրել են տքնաջան և շահեկան աշխատանք խորհրդահայ պատմաբանների աշխատությունների քննական վերլուծության ասպարեզում՝ անհրաժեշտության դեպքում անվարան մատնացույց անելով նրանց բացթողումները, քննադատաբար վերլուծելով իրենց նախորդների որոշ անընդունելի մեկնաբանությունները և, ինչն ավելի կարևոր է, ըստ պատմագրության՝ իբրև գիտական մասնաճյուղի կողմից առաջադրվող հիմնական պահանջներից մեկի, իրենց խոսքն են ասել բուն պատմական իրադարձությունների առնչությամբ:

Մ. Կարապետյանի, Է. Գևորգյանի և Է. Մելքոնյանի գրչին պատկանող մենագրությունն, անտարակույս, ոչ միայն կհետաքրքրի պատմաբաններին, այլև մեծապես կօժանդակի ուսանողներին և երիտասարդ հետազոտողներին՝ ճիշտ կողմնորոշվելու հայրենական պատմագրության տարբեր կնճռոտ խնդիրներում:

ՊՈՂՈՍՅԱՆ Վ. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր